



**Saints Joachim & Anne
Armenian Apostolic Church**

Ա. ՅՈՎԱԿԻՆ ԵՒ ԱԽՍ
ՀԱՅՑ. ԱՌԱՋԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPAZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ՔՀԱՅՑ. ՓՈՓԱԶԵԱՆ, ՀՈՎԻԼ

27 Մայիս. 1993

Գեր. Տ. Խաժակի Արք. Պարսամեան,
Առաջնորդ,
ի Սիւ Ծորը, Ն.Ե.,

Սրբազն Հայր,

Սոյն նամակը կը վերաբերի Եկեղեցւոյս Տասնամեակի նշումին եւ տօնախմբութեան։ Յայտնի է ձեզի որ՝ Նոյեմբեր 20 եւ 21, 1993, Շաբաթ եւ Կիրակի օրերը յատկացնած են ծխալիան համայնքիս մէջ, շրջանիս Սրբոց Յովակիմ՝ եւ Ասսա Հայց։ Եկեղեցւոյ 10-ամեակին։

Սոյն Տասնամեակի առնչութեամբ կ'ուզենք հետեւեալ պարագաները բերել ձեր
Նկատառութեան։

ա.- Կը հրատիրուիք Կիրակի, Նոյ. 21-ին Եկեղեցւոյս մէջ Ս. Պատարագ մատուցանել եւ Բանին Կենաց քարոզութեամբ մեր հոււատացեալները մխիթարել։ Խսկ յետ Եկեղեցական արարողութեանց, այլուր տեղի ունենալիք ծաշկերոյթին նախազահել եւ գլխաւոր խօսողը ՌԼՄԼ։

բ.- Նոյ. 20-ին, Շաբաթ օրուան գործունէութեան վերաբերմամբ, կրնանք սաըսել որ՝ ձեր Թելաղրութեան/համաձայն, կարգադրուած է որ՝ յետ միջօրէին հանդիպում մը ունենալիկեղեցւոյս բոլոր օժանդակ կազմակերպութեանց վարչութեանց եւ ծխական Խորհուրդին հետ, եւ յետ այնորիկ առանձինն հանդիպում ունենաք ծխական Խորհուրդին հետ, եւ ապա ընթրէք Միական Խորհուրդի անդամներուն հետ միասին, հանդերձ իրենց ամուսիններով եւ եթէ յարմարութիւն ներկայանայ, նաեւ Օժանդակ Միունիեանց վարչութեանց անդամներուն եւս մասնակցութեամբ։

գ.- Կը խնդրուի ձեզմէ՝ Եկեղեցւոյս Տասնամեակին առթիւ պատգամ մը փութացընէք ձեր լուսանկարին հետ միասին որպէս զի այս առթիւ հրատարակուելիք ծանուցմանց գրքոյկին մէջ դրուի։ Ներփակած եմ փոքրիկ ծանօթութիւն մը համայնքիս մէջ Եկեղեցաշինութեան զանազան չ'փուլ՝ երուն մասին՝ Վուէսթ Փուլմէնի սկզբնական օրերէն սկսեալ մինչեւ Փալոս Հայթցի ներկայի շինարարութիւնը; ի հարկին օգտագործելու համար իբրեւ պատմական տեղեկութիւն։

դ.- ի վերջ բանիս աւելցնեմ որ՝ մասնաւոր փափաք մը յայտնուած է որ Կիրակի օրուան 10-ամեակի պատարագին պաշտօնապէս հրաւիրուին Եկեղեցւոյս առաջին օրնուան

Շարունակութիւն նախորդ է ջէն...

քոլոր կնքահայրերը եւ եկեղեցւոյս յառաջամասին նստարաններուն վրայ յատուկ բաժին մը յառկացնել , զիրենո պատուած ըլլալու համար : Արդեօք կարելի՞ է խընդորել ձեզմէ որ՝ յարմար պահու մը սրհնութեան ուխտով մը վերընծայումը ընէք իրենց :

Ե.- Զեր ժամանումին համար երբ վերջնական կարգադրութիւնները ընէք- և լրբաթ եռեկոյ կամ Շաբաթ առաւօտ- , հաճեցէր տեղեակ պահել մեզ առջեկին առթիւ , որպէսզի ծխական խորհուրդի Առենապետին հետ միասին ձեզ դիմաւորենք :

Կարծեմ ներկայիւս այսչափով կրնանք բաւականանալ ամիշական հարցերու նկատառման տեսակէտով , իսկ եթէ յետազային ուրիշ հարցեր ներկայանան՝ զանոնք կարելի է հեշտորէն կարգադրել հեռածայնով :

Խոնարհաբար ,
Աղօթակից՝

S. Տիրան Աւ. Ք Հնյ. • Փափազեան